ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/58 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	Gene Pulser Xcell Electroporation System	GenePulser Xcell	Bio-Rad	Մանրէների և խմորասնկերի էլեկտրոպորացիայի համակարգը նախատեսված է բակտերիաների և խմորասնկերի էլեկտրոպորացիայի համար, ինչպես նաև այլ այնպիսի կիրառությունների համար, որտեղ պահանջվում է բարձր լարման իմպուլսների կիրառություն փոքր ծավալներով նմուշների համար։ Համակարգը ապահովում է ճշգրիտ և վերահսկվող էլեկտրական իմպուլսներ՝ գենետիկական նյութի արդյունավետ ներմուծման համար։ Համակարգը ներառում է՝ • էլեկտրոպորացիայի հիմնական բլոկ, իմպուլսի կառավարման մոդուլ (Pulse Controller, PC module), կյուվետների խցիկ, լրակազմում ներառված են էլեկտրապորատորին համապատասխան 0.1 սմ և 0.2 սմ մանրէազերծ էլեկտրոպորացիոն կյուվետներ (յուրաքանչյուրից՝ 50 հատ)՝ համապատասխան

				շտատիվով Սարքը նախատեսված է բոլոր տեսակի պրոկարիոտ բջիջների և խմորասնկերի տրանսֆորմացիայի համար, համատեղելի է ցանկացած տեսակի էլեկտրոպորացիոն բուֆերի հետ, ունի նախապես սահմանված ծրագրեր՝ առավել տարածված բակտերիական և խմորասնկային բջիջների համար, ինչպես նաև ունի ճկուն և հարմար ծրագրավորման հնարավորություն: Էլեկտրոպորատորը աշխատում է էքսպոնենցիալ կամ քառակուսի ալիքաձև իմպուլսներով: Սարքը ապահովում է 10, 25 և 50 միկրոֆարադ ունակության ընտրության հնարավորություն, զուգահեռ միացման դիմադրությունը կարգավորվում է 50-1000 Օհմ միջակայքում, քայլերի բաժանումը 50 օհմ, ինչպես նաև առկա է անսահման դիմադրության (∞) ռեժիմ, որը ապահովում է էլեկտրական շղթայի ճկուն կառավարումը: Սարքի անվտանգ և կայուն աշխատանքի համար սահմանված են նմուշի դիմադրության նվազագույն արժեքներ: 200–2500 Վ լարման դեպքում նմուշի դիմադրությունը՝ 20 Օհմ, իսկ 2500–3000 վոլտ լարման դեպքում՝ 600 Օհմ: Քառակուսի ալիքի ռեժիմում իմպուլսի տևողությունը կարգավորվում է 0.05-5 միլիվայրկյան միջակայքում՝ 0.05 միլիվայրկյան քայլով: Հնարավոր է կիրառել մեկ կամ երկու իմպուլս, որոնց միջև նվազագույն ընդմիջումը կազմում է 5 վայրկյան: Սարքավորումը մատակարարվում է համապատասխան 5-ական 0,1 և 0,2 սմ բացվածքով էլեկտրապորացիոն կյուվետների հետ միասին: Փաթեթի լրակազմը պարունակում է 50-ական ստերիլ էլեկտրոպորացիոն կյուվետներ՝ 0.1 սմ

				և 0.2 սմ էլեկտրոդների բացվածքով և դրանց համապատասխան շտատիվով: Կյուվետները նախատեսված են էլեկտրապորացիոն համակարգերով մանրէային, խմորասնկերի և կաթնասունների բջիջների հետ օգտագործման համար: Պատրաստված են բարձր էլեկտրադիմացկուն նյութից: Կյուվետները կիրառելի են բակտերիաների և խմորասնկերի էլեկտրոպորացիայի համար: Տեղադրումը իրականացվում է մատակարարի համապատասխան սերտիֆիկացված մասնագետի կողմից: Համապատասխանում է միջազգային ISO9001 և ISO 13485 ստանդարտներին: Ապրանքը նոր է, չօգտագործված և չի պարունակում օգտագործած կամ կիսամաշ դետալներ: Մատակարարումից առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ: Էլեկտրապորացիայի համակարգը ներառում է 1 տարի երաշխիք սարքավորման տեղադրումից և աշխատանքային վիճակի բերելուց հետո: Ապրանքը պետք է լինի առնվազն 2025թ արտադրության և մատակարարվի ապրանքին վերաբերող բոլոր փաստաթղթերի հետ միասին: Առկա պետք է լինի արտադրողի հավաստագիր:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Концерн-Энергомаш ЗАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/58 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	марка	наименование производителя	технические характеристики
3				